Կրթական միջավայրի ախտորոշման մի քանի ասպեկտների շուրջ

Հերմինե Սերյոժայի Ալավերդյան

մանկավարժության դասախոս

Գորիսի պետական համալսարան

աշխարհագրության ուսուցիչ

Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց

Սերգեյ Վլադիկի Ավանեսյան

ուսումնական գծով փոխտնօրեն

Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց

ՏՏ դասախոս

Գորիսի պետական քոլեջ

Անոտացիա. Հոդվածում առաջ են քաշվում մանկավարժական դիագնոստիկայի՝ որպես տեսական-կիրառական բնագավառի մի քանի ասպեկտները, կրթական միջավայրի և նրանում առկա խնդիրների բացահայտման ու ախտորոշման հիմնախնդիրները:

Հանգուցային բառեր. Կրթական միջավայր, մանկավարժական դիագնոստիկա, ուսուցման գործընթաց, կրթական նպատակ,կրթական արդյունք:

Ժամանակակից կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխություններն ակնհայտ են: Եվ ինչպես ամեն մի դինամիկ երևույթ, այնպես էլ կրթությունը իր զարգացման ճանապարհին անընդհատ կարիք ունի իր առջև ծառացած խնդիրների վերհանման, բացահայտման ու դրանց լուծման ուղիների որոնման:

Կրթական միջավայրի և նրանում առկա խնդիրների բացահայտման ու ախտորոշման հիմնական նպատակը կրթության որակի բարձրացումն է:

Կրթության որակի վրա ազդում է տվյալ հասարակության մեջ ձևավորված տնտեսական, քաղաքական, ազգային, կրոնական, ինֆորմացիոն, սոցիալ-մշակութային միջավայրը և, ըստ այդմ, կրթության մոդելներն ու ձևերը խիստ տարբերվում են միմյանցից: Մյուս կողմից, կրթությունը սոցիալական կյանքի համեմատաբար անկախ համակարգ է և ինքն էլ, իր հերթին, ազդում է հասարակության բոլոր ոլորտների վրա: Ավելին, այն ուղղակի կամ անուղղակի ազդում է հասարակության խնդիրների լուծման ու դրանց ուղիների որոնման վրա:

Այսպես, կրթության որակի նշանակալի բարձրացումն ու նրա արդիականացումը հնարավորություն են տալիս հետագայում բարելավել աշխատանքային ռեսուրսների որակական հատկանիշները, նպաստել հասարակության կենսամակարդակի աճին: Ընդհանուր առմամբ, բարձրորակ կրթությունը ներդաշնակ անհատականություն է ձևավորում ինչպես ընդհանուր մշակութային համատեքստում, այնպես էլ մասնագիտական առումով:

Կրթության հիմնական չափանիշը գիտելիքի և մտածելակերպի հետևողականությունն է, որն արտահայտվում է նրանում, որ մարդն ի վիճակի լինի վերականգնել իր գիտելիքի համակարգի բացակայող օղակները և օգտագործել տրամաբանական հիմնավորումներ:

Կրթության ներուժը իր ամբողջ թափով օգտագործելու դեպքում հասարակությունը կարող է դառնալ ինքնակատարելագործվող և խնդիրներին արագ լուծումներ գտնող մի համակարգ:

Կրթական ոլորտում առկա խնդիրների լուծման բանալին համապատասխան կրթական միջավայրի, նրա առանձին տարրերի մանրամասն ուսումնասիրման մեջ է:

Խոսելով կրթական միջավայրի մանկավարժական դիագնոստիկայի մասին, անհրաժեշտ է նշել, որ մանկավարժական դիագնոստիկա հասկացությունն առաջին անգամ օգտագործվել է 1968թ-ին, Կ. Ինգենկամպի կողմից: Նրա կարծիքով, մանկավարժական դիագնոստիկան ապահովում է ուսումնա-դաստիարակչական գործընթացի ուսումնասիրումը, թույլ է տալիս ճիշտ ձևակերպել մանկավարժական

գործընթացի պայմաններն ու արդյունքերը՝ հենվելով հասարակության զարգացման ճիշտ գնահատման վրա:

Ըստ Ինգենկամպի, մանկավարժական ախտորոշումը նախատեսված է, առաջին հերթին, անհատական ուսուցման գործընթացը օպտիմալացնելու համար, երկրորդ՝ հասարակության շահերից ելնելով ապահովելու ուսուցման արդյունքների ճիշտ որոշումը և, երրորդ, առաջնորդվելով մշակված չափանիշներով, նվազագույնի հասցնելու այն սխալները, որոնք առաջանում են կրթության տարբեր աստիճաններ փոխադրվելու, մասնագիտության փոփոխության և բազմաթիվ այլ կրթական գործընթացների արդյունքում [2]:

Ե.Ա.Սուխովիենկոն մանկավարժական դիագնոստիկան մեկնաբանում է որպես ճանաչողական և ձևավորող գործունեություն, որն ուղղված է մանկավարժական գործընթացների ուսումնասիրմանը՝ դրանք չափանմուշային օրինակների հետ համեմատելով:

Այն մանկավարժության տեսական-կիրառական բնագավառ է, որն ուսումնասիրում է կրթական գործընթացների իրականացման օրինաչափություններն ու սկզբունքները, մեթոդներն ու միջոցները:

Մանկավարժական դիագնոստիկան պատասխանում է հետևյալ հարցերին.

- ի՞նչ և ինչու՞ սովորել,
- ինչպիսի՞ ցուցիչների համաձայն սովորել,
- ի՞նչ մեթոդներով,
- ի՞նչ պայմաններում՝ ինքնակառավարման, ինքնագիտակցման [1]:

Ընդհանուր առմամբ, մանկավարժական արդյունավետություն հասկացության տակ կարելի է հասկանալ ստացած արդյունքների համապատասխանությունը կանխատեսվող արդյունքի հետ: Առանձնացվում է արդյունքի գնահատման երեք հիմնական ասպեկտներ.

1. տեսական, որտեղ պետք է հասկանալ, թե ինչ է արդյունքը և ինչ է մանկավարժական դիագնոստիկայի արդյունավետությունը,

2. մեթոդատեխնոլոգիական, որը ենթադրում է մանկավարժական արդյունքին հասնել հարցադրումը,
3. ռեֆլեքսիվ-գնահատողական, երբ վեր են լուծվում, թե ինչպես գնահատել, չափել, մշակել ուսումնական գործընթացի արդյունքերը:

Կրթական արդյունքը գործունեության միջոցով ստացված օբյեկտիվ փոփոխությունն է, որն ուղղված է որևէ նպատակի իրացմանը, իրականացմանը: Արդյունքը գործունեության ցանկացած վերջաբանն է, անկախ նրանից՝ այն դրական է ավարտվել, թե ձախողվել է: Այլ կերպ ասած, արդյունքը դա գործընթացի ավարտն է, որն ուղղված է եղել դրված նպատակների իրականացմանը:

Մանկավարժական գործունեության արդյունքը անմիջականորեն կապված է նպատակի հետ: Նպատակն էլ իր հերթին ցանկալի արդյունքի մասին մեր ունեցած պատկերացումն է: Մանկավարժության մեջ արդյունքը ենթադրում է երեք հիմնական հասկացություններ՝ ուսումնական, դաստիարակչական և գործնական:

Ուսումնական գործընթացի դիագնոստիկան հնարավորություն է տալիս վերլուծել կիրառվող ուսուցման մեթոդի, տեխնոլոգիայի, մեթոդիկայի արդյունավետությունը, ուսուցչի աշխատանքի որակը, վեր հանել ուժեղ և թույլ կողմերը, գնահատել փոփոխությունները հաշվետու ժամանակահատվածում: Մանկավարժական դիագնոստիկայի կիրառումը հնարավորություն կտա մանկավարժին.

- սահմանելու համապատասխան ուսումնական արդյունքներ,
- ձեռնարկելու և պլանավորելու ուսուցման գործընթացի քայլերի հաջորդականություն,
- ստեղծելու ողջամիտ դրդապատճառներ՝ հատկանշելով արդյունավետ ուսուցումը:

1950-1970-ական թվականներին ձևավորվեց զարգացնող ուսուցման տեսությունը, որը ուսումնառության տեսության և պրակտիկայի ուղղություններից է: Այն իր բովանդակությամբ, մեթոդներով ու կազմակերպման ձևերով ուղղված է սովորողների ֆիզիկական, ճանաչողական և բարոյական ունակությունների

զարգացմանը՝ նրանց պոտենցիալ հնարավորությունները և այդ զարգացման օրինաչափությունները օգտագործելու միջոցով: Այս տեսության ակունքներում կանգնած են եղել Զանկովը, Էլկոնինը, Դավիդովը և այլոք:

Իրականացնելով օբյեկտիվ մանկավարժական դիագնոստիկա, կարելի է հասնել սովորողների, դասավանդող մասնագետների կոմպետենտության, ինքնավերլուծության բարձրացմանը, որն էլ իր հերթին անմիջականորեն կնպաստի ուսումնական որակի բարձացմանը, կապահովի ուսումնական գործընթացի ներկայացուցիչների անձնային աճին: Ճիշտ և օբյեկտիվ դիագնոստիկան է նպաստում մանկավարժական աշխատանքի արդյունավետության ու որակի բարձրացմանը:

Մանկավարժական դիագնոստիկայի նախապատրաստման և իրականացման գիտական մոտեցման հիմնական սկզբունքներն են՝ նպատակաուղղվածությունը, հասցեավորվածությունը, մանկավարժական դիագնոստիկայի հետագա գործունեության հաշվառում, կոնկրետ մանկավարժի դիտարկումը՝ ամբողջ մանկավարժական կոլեկտիվով փոխկապակցված, մանկավարժի գործունեության ամբողջականությունը և համակարգվածությունը: Այս ամենն հաշվի առնելով, կարելի է վստահորեն նշել, որ մանկավարժական դիագնոստիկան ունի կարևորագույն տեղ և դերակատարում ուսումնադաստիարակչական գործընթացի լիարժեքության և արդյունավետության գործում:

Դիագնոստիկան արդյունավետ իրականացնելու նպատակով անհրաժեշտ է հստակ առանձնացնել մանկավարժի աշխատանքի վերլուծության պահանջները, որից էլ պետք է բխեն հետագա առաջարկներն ու խորհուրդները: Միշտ պետք է սահմանել ծախսված մանկավարժական ուժերի և հասած հաջողությունների փոխհարաբերակցությունը, պետք է օգնել մասնագետին ինքնավերլուծության, ինքնագնահատման կարողությունների զարգացման հարցում, որն էլ կնպաստի նրա մասնագիտական կարողությունների աճին:

Ըստ այդմ, պետք է կարողանալ գործունեության նպատակը կոնկրետ գործողությունների վերածել և հաշվառել նյութական բազայի հնարավորությունները և կարևորել առաջադրված խնդիրների ու նպատակների իրագործման համար

բովանդակության, մեթոդների և միջոցների ընտրությունը, հստակեցնել մասնագետների պահանջմունքների, կարիքների, հետաքրքրությունների, դիրքորոշումների, դրդապատճառների առանձնահատկությունները:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Битинас Б. П., Катаева л. Н., Педагогическая диагностика: сущность, функции, перспективы. //Педагогика.-1993 N2, ст. .10-15
2. Ингенкамп К., Педагогическая диагностика, пер. с нем. - М.: Педагогика, 1991. - 240*с.*)